

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse  
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ներկայ 1898 թվականի  
Պոչտային համար 12 ֆրանկ  
» » վեցամսեայ 6 »  
Արտասահմանի » 14 »  
» » վեցամսեայ 7 »  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համալի գրամ հասցին գրկել հեղուհայ հասցեով  
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Редакция на вѣстникъ  
„Иравункъ“  
ВАРНА (България).

Rédaction du journal  
„Iravounk“  
VARNA (Bulgarie)

Խմբագրության ուղղեալ գրութիւնք  
ևս չեն որկուիր ևս յարեալ դասուած-  
ները միայն կը հրատարակուին ամբող-  
ջովիւն կամ մասամբ:  
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-  
փեկ աւելի անգամներու համար 20 օ/օ  
գնդ կը լինի:

## « ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆԵՐՎԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ »

Երբեմն թուրք պետական մարդ  
մը թորբայեցիութեամբ Սահմանադրու-  
թիւնը անուանեն է քառասունչի  
անիւ: Նշանաւոր բաշային այս  
խօսքը, մեր Սահմանադրութեան  
նկատմամբ թէեւ ոչ բոլորովին  
անտեղի, գերազանցապէս պիտի  
յարմարէր սակայն «Եւրոպական  
Ներգաշնակութիւն» կոչուած դը-  
րութեան: Դիւանագէտները և ա-  
նոնց պաշտօնական ու կիսապաշ-  
տօն օսկանները, ինչպէս յայտնի է,  
այս անունով միտքեցին այն դիր-  
քը, զոր տէրութիւնները իրարու  
հանդէպ կը բռնեն քաղաքական  
զանազան խնդիրներու մասին,  
զորս որպէս թէ կը լուծեն առանց  
աշխարհի խաղաղութիւնը վտան-  
գելու: Այսպէս կը յայտարարուի  
ժողովուրդներուն, բայց իրողու-  
թիւնը սա է որ բան մը չուծած  
չունին և հետեւաբար ընդհանուր  
պատերազմը որքան յետագայի,  
այնքան աւելի շառաչուով մը օր  
մը պիտի պայթի թշուառ մարդ-  
կութեան գլխին: Այս է ահա Եւ-  
րոպական Ներգաշնակութեան աշ-  
խարհի շնորհած բարիքը, զոր  
լրագրական ու դիւանագիտական  
կեղծիքը կը փառաբանէ ամէն օր:  
Քաղաքական խնդիրները, զոր որ-  
պէս թէ կը լուծեն, իսկապէս կը  
ծածկեն մոխիրի մը տակ, որ ան-  
համար անմեղ մարդկային զոհերու  
ածիւնն է, անմեղ արիւնով շաղախ-  
ուած: Մոխիրը կը սպասէ որ ազա-  
տութեան ուժգին շունչ մը անցնի  
իր վրայէն, ցրուէ զինք և ուրիշ  
անգամներէ աւելի սաստիկ հրահրէ  
իր ներքեւ ծածկուած կրակը:  
Կառավարութիւնները շատ աղէկ  
գիտեն այս և այս պատճառաւ աշ-  
խատութիւն և դրամ չեն խը-  
նայեր պատրաստ գտնուելու համար  
քաղաքական ահաբեկի փոխորհիւնե-  
րու օրերուն: Անգագար կը սպա-  
ռազինուին, պատերազմական ծախ-  
քերուն բեռին տակ ճնշելով ժողո-  
վուրդը: Անգլիա իսկ որ մինչեւ մօտ  
ժամանակներ կը կարծէր թէ ցա-  
մաբային տէրութեանց բանակնե-  
րուն նման զինուորական կազմա-

կերպութեան մը պէտք չունէր իր  
կղզիացեալ դիրքին պատճառով,  
իր թագուհին բերնով վերջերս  
յայտարարեց թէ անգլիական բա-  
նակը հիմնովին վերակազմելու ծը-  
րագիրը կառավարութեան լուրջ  
ուսումնասիրութեան առարկայ է  
արդէն:

Այս է ներգաշնակութիւնը: Ինչ  
անիմանալի համաձայնութիւն է  
այս, որ ամէն մէկ քաղաքական  
խնդրի առջեւ կանգնելի, կը շուա-  
րի և երկար ամիսներու ու տա-  
րիներու պէտք կունենայ մինչեւ  
որ խնդակարկել կը մը գտնէ խըն-  
դիրը առժամապէս մարելու:

Ահա իսկապէս քառակուսի ա-  
նիւր որ ամէն մէկ դառնալուն  
կանգ կառնէ և վեց մեծ տէրու-  
թեանց կառավարներուն երկար  
ճիգին ու ճարտարութեան կը կա-  
րօտի վերստին տեղէն շարժելու  
համար: Անիւր խրատ է հիմայ  
կրէտէի ծովափին աւազին մէջ այն-  
քան ուժգին որ ամիսներէ ի վեր  
Ռուսիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ  
ճարտարագոյն կառավարները ի  
զուր կը ջանան զայն աղատել ու  
գնել յաղթական կառքի մը տակ,  
որուն վրայ կանգնած Եւրոպիոս  
իշխանը մտնէր հերոսներու այդ  
կղզին:

Այս քառակուսի անիւր կեցած  
է միշտ մարդկային արեան լիճե-  
րու մէջ տեղ, արիւնով շաղախ-  
ուած դրսէն ու ներսէն, և երբ օր  
մը այդ լիճերը ցամքին ու տա-  
քուկ արիւի մը ճառագայթները  
իյնան իր վրայ, կտոր կտոր պի-  
տի քայքայուի ան՝ փտած ու  
որդնոտած:

Եւրոպական համաձայնութիւն  
կոչուած անբարոյական դրութեան  
վերջնական անխուսափելի ճակա-  
տագիրը այս պիտի ըլլայ, որպէս  
զի մարդիկ չի կորսնցնեն Գերա-  
դոյն Արդարութեան և Գերագոյն  
Բարոյականի գողափարը, որ ար-  
դէն խախտի սկսած է մանուկանդ  
Հայերուն և Յոյներուն մէջ և ա-  
ռանց որուն մարդկային ընկերու-  
թեան գոյութիւնը անկարելի է  
է երեւակայել:

Հայ ժողովուրդը պիտի տեսնէ  
այդ օրը, Եւրոպական ներգաշ-  
նակութեան շարժումները ըլլալը,  
այսինքն արգարութեան յաղթա-

## ԿՐԹԱԿԱՆ—ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ջարդացման այն աստիճանը,  
ուր կը գտնուինք այսօր, այնպի-  
սի ծանր ու աւերիչ հարուածներ  
կուտայ մեր տնտեսական կացու-  
թեան, որ թրքական հալածան-  
քէն յետոյ, կրնանք ըսել թէ ա-  
ռաջին տեղը կը բռնէ զմեզ փը-  
ճացնելու սահմանուած աղէտնե-  
րուն մէջ:

Եւ ասոր գլխաւոր պատճառնե-  
րէն մէկն ալ մեր դպրոցներն են:

Ընդհանրապէս մեր դպրոցներ,  
իրենց բոլոր գեղեցիկ ծրագիրնե-  
րով, կարծես տեսակ մը ֆապրի-  
քաներ են, ուր տղին վրայէն հետ-  
զհետէ շոգի կը դառնան շնորհա-  
լի ու գործնական կեանքի մը ա-  
մէնէն էական պայմանները և ա-  
նոնք աւերակներուն վրայ կը հիմ-  
նուի, օրուան նորաձեւութեան  
համեմատ, յաւիտեական Եսը:

Փակագծի մէջ խօսելով, կը-  
սենք թէ ասոր կենդանի ապա-  
ցոյցներ են նոյն իսկ մեր խօսու-  
ածքն ու շարժուածքը և մեր հը-  
րապարակագրութիւններ, որոնք  
ծայրէ ծայր խոշոր ուժքաւոր  
են մեր Եսին, որ չափ ու սահ-  
ման չգիտեն՝ ուրիշ անուանարկե-  
լով, ինքզինքն առաջ քշելու հա-  
մար՝ ստեղծելու մէջ այնպիսի բա-  
ռեր, ժայթքելու մէջ՝ այնպիսի  
փրփուրներ, թափելու մէջ այն-  
պիսի լուսանքներ, որոնք՝ այսօր  
իրենց քանակ ու որակին կողմա-  
նէ, նոյն իսկ հայհոյանքի լեզու  
նկատուած լեզուները գերազան-  
ցելու համեմատութեան մը հա-  
սած են դժբաղդաբար:

Թրքականը՝ ուղէ չուզէ, դուրս  
կը ծուէ և արաբականը հապճե-  
պով տեղի կուտայ մեր հսկայ  
հայհոյանքներուն առջեւ:

Վերագառնալով մեր խօսքին,  
կրտենք թէ կեանքը տեսակ մը  
ճակատամարտ է: Եթէ պատե-  
րազմին մէջ թշնամին կարենալ  
յաղթելու համար ճանչնալ պէտք  
է նախապէս անոր ուժը, անոր  
գրաւած դիրքը և վերջապէս ա-  
նոր սպառազինութեան չափն ու  
աստիճանը, գիտնալ և շնորհքով  
գիտնալ պէտք է նաեւ լաւ գին-

ուելու և լաւ դիմադրելու դադա-  
նիքը:

Կեանքի պայմաններ արդէն  
ինքնին դաժան ու սպառնալից են,  
հանդէպ ատոր մենք դժբաղդաբար  
դպրոցէն կուրի դաշտը կը նե-  
տուինք ռազմագիտական յայտ-  
նի և խոր տգիտութեամբ և ի  
հարկէ չարաչար կը յաղթուինք,  
հարկաւոր եղած բարոյական զէն-  
քերու և խել մը անհրաժեշտ  
պաշարներու բացարձակ պակա-  
սութեան պատճառաւ:

Ձի՛ ինչպէս վերեւ ըսինք, մեր  
կրթարաններու մթնոլորտն այնքան  
նօսր է, այնքան վերացական, որ  
գործնական կեանքի խօսքն իսկ  
ընել կարելի չէ:

Մեքենաներ, որոնք զետեղուած  
են հոն, իրենք իսկ թափուած  
յար և նման կաղապարներուն վը-  
րայ, բնականաբար կարող չեն  
գործնական հատութիւններով զի-  
նուրեղ տղան և պատրաստել զա-  
նի մեծ կուրի, որուն դժբաղդ  
զոհերն եղած են և իրենք՝ նման-  
րինակ օգային դաստիարակու-  
թեան մը շնորհիւ:

Ատոնց պաշտօնն եղած է միշտ  
իրենց վարպետներուն հաւատա-  
րիմ արձագանքը ըլլալ և շարու-  
նակ հայթայթել ընկերութեան՝  
բանաստեղծ—փիլիսոփաներու և  
կամ իրապաշտներու լէգէոններ,  
թողլով որ ատոնց մէկ մասը՝ օ-  
գով և միւսն իր Եսով անանի,  
մինչեւ որ տխուր և սոսկալի ի-  
րականութիւնը իր վերջին բառն  
արտասանէ կենաց ահաբեկ պայ-  
քարին մէջ:

Թէ ինչու մեր տգէտ դասա-  
կարգը աւելի յաջողած է իր ապ-  
րած միջավայրին մէջ տիրել ար-  
հեստի հրապարակին բան մեր  
ուսեալները, կարելի է շատ հեշտ  
բացատրած ըլլալ, աչքի առջեւ  
ունենալով միայն մեր դպրոցնե-  
րու տուած այս կէս ու ժխտա-  
կան դաստիարակութիւնը:

Տգէտը իր շուրջն անցած դար-  
ձածով միայն հետաքրքիր՝ ու-  
սումնասիրելու անտաշ բույց բնա-  
ծին կարողութեամբ մը կսկսի հե-  
տզհետէ ճանչնալ իր միջավայրին  
տնտեսական կացութիւնը, անոր  
պայմանները և ընտելանալով գէշ

Թէ լաւ ապրելու համար իր երկրին մէջ գտնուած առձեռն միջոցներուն, տեսակ մը համեստ ինքնավստահութեամբ կը սկսի աշխատել և գոնէ իր ձեռք բերած արհեստներով իր ճակատագրին տէրը դառնալ:

Իսկ մեր ուսնալ կոչուած դասակարգը՝ չունենալով ոչ այն ընդարձակ ու բազմազան հմտութիւնը, որով կարող ըլլար գործնական աշխարհի մէջ տիրել ու առաջնորդել տգէտ դասակարգին և ոչ ալ այն կրաւորական համակերպութեան ոգին, որով կարող ըլլար պարզ ձեռնարկով, ըլլալով, այսպէս թէ այնպէս քիչ նեղութեամբ մղել հացի կուրը, ինքնաճար անճարակ կը մնայ մէջ տեղը, բացարձակապէս տգէտ իրական կ'անքի հագարումէկ դարձուածքներուն և սր աւելի վատթարն է, խեղ ու անթեք բնաւորութեան մը սահմանուած բոլոր ազդեանքներուն ալ խաղաղիկ դարձած:

Ահա հոս կրակսի սոսկալի ողբերգութիւնը, որուն մինք կը վերադառնանք յաջորդով:

ՈՒՂԻՂ ԴԱՏԵՆՔ

Բ.

Նախ ճշգրէք թէ ո՞վ էին մեր յեղափոխականները, որ դասակարգէն և ընդհանրապէս ինչ նկարագրի տէր: Ոչ ոք կրնայ ուրանալ թէ հայ երիտասարդութեան ծաղիկն էր, որ ինքզինք նետեց յեղափոխութեան մահաբոյր ասպարէզը:

Հայրենիքի սիրովը բոցավառ, ազգ. ազատութեան՝ ինչք, ընտանիք և կեանք ի հարկին զոհելու յանձնառու, ազնուախոհ, ազգ. մտաւորաբար մը յափշտակուած երիտասարդներ կազմեցին հայ յեղափոխականներու ահագին մեծամասնութիւնը, որ ամբողջ հայ ժողովրդի հիացումը գրաւած էր իրաւամբ խօսքերնիս Եւրոպայի մէջ ապրող յեղափոխական առաջնորդներու և կեդրոններու վրայ չէ անշուշտ, այլ Հայաստանի հողին վրայ գործող ու խլրտացող անձնուրաց հոգիներու վրայ, որոցմէ շատեր կախաղան բարձրացան կամ թըրքական զնգաններու մէջ գտան եղբերգական մահ մը, և բնաւ նշանակութիւն չունին, եթէ իրենց մէջ կար ու կայ սպրդած՝ գծուծ հաշիւներով, եսական ու փառաւորական դիտումներով տոգորուած մաս մը: Մեծամասնութիւնը ազնիւ ու անձնուէր էր, ու եթէ իր այս սրտի բարձրութեան հաւասար մտային զարգացման, հասունութեան ալ տէր ըլլար, յեղափոխական գործին մէջ չպիտի տեսնուէր լրջութեան և չընդհանրապէս այն պակասութիւնը որ այնքան սուղի նստաւ մեզի:

Իրերը հարեւանցի դատելու ու նակութիւնը կամ, եթէ կուզէք,

թեթեւամտութիւնը տարապայման լաւատես և ինքնավստահ ըրած էր մեր յեղափոխականները: Սակայն նկարագրի այդ թերութիւնը յատուկ չէ և չի կրնար ըլլալ միայն յեղափոխականին: Հայ ժողովրդին անխելահաս անհասկացող չէին որ զիրար փնտռելով գտան և թեթեւամտութեամբ դասակարգ մը կազմելով զատուեցան ազգին մը նացած մասէն, որ դասապարտէր իրենց ձեռնարկը իբր տղայական և փնտասկար:

Ոչ, հայ յեղափոխականը ոչ-յեղափոխականէն կը զատուէր թերեւս ազատութեան սիրով և անձնուէր հոգիով մը, բայց ոչ իր թեթեւ դատողութեամբ որ հայ հանրութեան, ամէնուս ալ բաժինն եղաւ: Հայ յեղափոխականը իր այս թերութեան մէջ հայ ժողովրդին ներկայացուցիչն էր, իբր ժողովուրդի զաւակը, անոր հարադատ ծրնունքը, նոյն արիւնէն, նոյն մարմինէն:

Յեղափոխականներուն զէմ հիմայ գոռացող, զանոնք խծրծող ու կտամբող անձերէն քանի՞ հոգի կ'ըլլէ որ ձեռքը խղճին վրայ կարենայ ըսել թէ կոտորածներէն առաջ՝ դատապարտած էր յեղափոխական խլրտումները, նշմարելով կազմակերպութեանց թերութիւնը և հեռատեսած էր մեր կրեղիք ազդեանքը: Ճշմարիտը այն չէ՝ որ ամէնքս ալ Բ. Դրան ցոյցէն ետքը անզիական նաւերուն վրայ փորէն ներս մտնելուն, և նոյն իսկ Օսմ. պանքայի գրաւումէն ետքը Հայկական ինդրին լուծուածին անկողէտ կը սպասէինք գիշեր ցորեկ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Տօպրիչ 6 փետր.

Դիտնալով որ Պուլկարիոյ զանազան կողմերը ցրուած հայ գաղթականներուն վիճակովը կը հետաքրքրուէք, կը փութամ ձեզ տեղեկացնել թէ այստեղի գաղթականներուն չքաւոր մասը նուազ արգահատելի է քան վառնայի չքաւորները, որոնց կացութեան մասին այնչափ տխուր տեղեկութիւններ կը կարգանք երբեմն իրաւունքի մէջ:

Տօպրիչի գաղթականները աշխատելով և իրարու օգնելով գէշ աղէկ իրենց ապրուստը կը ճարեն: Անցորդ չքաւոր ազգակիցներու ալ կ'օգնեն: «Հայաստան» անուն սըրճարան մ'ունին, ուր յաճախ շաբաթը քանի մը կարօտ անցորդներ կուգան ու կ'օգտուին հաստատուած գաղթականներու բարեսրտութենէն: Ամէն գովեստէ վեր է ասոնց ազնիւ զոհողութիւնը: Ամբողջ ամառը չարաչար աշխատելով հազիւ կրնան ձմեռուան պարտաւորութիւն համար փոքրիկ խնայողութիւն մ'ընել. և այս խընայողութիւնէն է որ կուտան հացակարօտ անցորդին: Ամէն մէկ

հանգանակութեան ժամանակ այրին լուսնն է, զոր իրենցմէ իւրաքանչիւրը կուտայ: Ապրին: Հայ երիտասարդաց ընկերութենէն յետոյ այստեղ երեւան եկաւ Աղքատախնամ ընկերութիւնը, որուն մէջ նոյնպէս կը հանդիպէր գաղթական գաւառացիներու որոնք միշտ յօժարակամ կը վճարեն իրենց շաբաթական բաժինները:

Եթէ անոնք կարենային ազգուօրինակ մ'ալ միւր բարեկեցիկներուն և հարուստներուն՝ դրօսանքի համար վառնուող լէվերու ալ գոնէ մէկ քանի սթոթիքներ աւելի պիտի ինչային հացի և կըրթիւթեան կարօտներու զանձանաւորին մէջ և քիչ մ'աւելի պիտի սփոփուէին հայ թշուառներ:

Գովեստի արժանի են այս երկու ընկերութեանց գործիչ անդամներու շանքերը: Երիտասարդաց ընկերութիւնը երեք ամիս առաջ բացաւ ընթերցարան մը ուր կը գտնուէին ազգային և օտար թերթեր: Աղքատախնամը երեք շաբաթէ ի վեր ամէնէն կարօտներուն հաց կը բաշխէ իր անդամներուն բաժնեկիցներէն և նըւէրներէ գոյացած հասոյթով:

Պէտք է սակայն աւելցնեմ թէ երիտասարդաց ընկերութեան նորընտիր գործադիր ժողովը երբեմն կը մոռնայ որ ընթերցարան և վարժարան զատ զատ հաստատուութիւններ են, որոնց եկամուտները ներքի չէ իրարու հետ խառնել: Ասկէ կրնան ծագիլ անկանոնութիւններ, շփոթութիւններ և մինչև իսկ անհամաձայնութիւններ ապագային մէջ: Այս կէտի վրայ ժողովին ուշադրութիւնը կը հըրաւիրեմ:

Անցորդ

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՆՈՒԱԳԱՅԱՂԵԱԸ

... Ժամը ինն է ու դեռ հանդէսը չէ սկսած:

Հետաքրքրութենէս կեռամ աթոռիս վրայ, ու տենդոտ անձկութեամբ մը կը դիտեմ թատերաբեմը, զոր խնամոտ ձեռքերը դրօշակներով ու գորգերով զարդարած են պատշաճապէս:

Հանդիսականները կը հասնին հետզհետէ ու կը լցնեն Սաֆարիեյի սրահը:

Ամենուն վրայ անձկութիւն մը, սրտնեղութիւն մը կը տեսնուի Դէս ու դէն խօսակցութիւններ, զգեստ ու ձեռքի երկրամիտութիւններ:

Վերջապէս թատերաբեմին խորէն կը լսուի զանգակի մը ազգարար ձայնը: Ուշադրութիւնները կը լարուին, ու երկիւղած լուսնեան մը մէջ, վարձագոյրը կը բարձրանայ:

Ակնահաճոյ պատկեր մը կը կախուի յանկարծ մեր աչքին առջև:

Բեմին մէկ կողմը գրաւած են նորատի պարմանուհիներ, ձիւնասպիտակ չըջագիտներու ու կապոյտ լանջանոցներու մէջ կորուած, որոնք երկնագեղ ծաղիկներու տպաւորութիւնը կրնան վրադ. միւս կողմը շարուած են կարգով դեռատի մանուկներ, նորահաս պատանիներ ու երիտասարդներ, որոնք իրենց կարմիր լանջանոցներով ու զլխանոցներով, ուրիշ ակնապարար զանազանութիւն մը կը դնեն բեմին վրայ:

Նշանը կը տրուի, ու կը սկսի առաջին խմբերգը:

Տարտիկի կտրիճն է որ կ'երգուի

քառաձայն, առաջնորդութեամբ Պ. Գալուստ Մէշտուտեանի:

Գոռ չեղաւ մը առած է հիմա լեռնցի չինականին այդ պարզուկ բայց խրոխտ երգը: Արուեստի շուայ խնամքը՝ անոր ինքնատիպ հրապոյրէն քիչ մը պակասեցուցած է կարծես:

Ամբողջութիւնը լաւ է սակայն, ու որոտաձայն ծափերու մէջ կ'աւարտի Պերճ—Մուշուկի այդ առողջ ու կազդուրիչ աղերսը:

Առաջին վարագոյրը կ'իջնէ:

Այս երեւոյթը կը կրկնուի տասն եւ եօթը հեղ շարունակ, ամէն անգամ նորանոր հմայքներու, նորանոր անկերպարներու շարք մը դնելով մեր առջև:

Այս անակնկալներու մէջ ճշմարիտ անակնկալ մըն է սակայն օրիորդ Բընարի մենախօսութիւնը, Հայ Որդւոր:

Ընդհանուր հետաքրքրութեան մէջ վարագոյրը կը բարձրանայ, ու տաղանդաւոր հայ դերասանուհին կերեւայ բեմին վրայ, նիհար ու տգործ, իր պատուած սու լաթերուն մէջ կարծես իրապէս մարմնաւորելով հայ որդին սրգաւոր ու թախծալի պատկերը:

Սարսուռ մը կը վազէ հանդիսականներուն վրայէն:

Իւ հայ որդւոր, արցունքի չիթերը թարթիչներէն կախուած, ձայնը յուզումէն ու հեկեկանքէն զոգողուն, աղիւծիկ նկարագրութիւնը կընէ իր կեանքին, դժբախտութիւններով, զբոկանքներով, մահերով լեցուն, ու հըրաւէր կը կարգայ ամբողջ հայութեան անտիրական չիլքիլ զինքը, գիտնալով որ «այսօրուան որդն է վաղուան Հայաստան»:

Դեռաւորն կը լլայ մի առ մի նկարագրել այս երաժշտական երեկոյթին բոլոր մանրամասնութիւնները: Համառօտեմք մեր ըսելիքը:

Պ. Գ. Մէշտուտեան, մեր տաղանդաւոր բարեկամը կատարեալ յաջողութեամբ վարեց բոլոր խմբերգները, ու գնահատելի ճարտարութեամբ փայլեցաւ զանազան վրայ, մանաւանդ Գարսիա Նոնիուաի խմբերգին մէջ, զոր նուագեց միայնակ:

Օր. Իոկուհի Աբրահամեան, ու Օր. Վերգիլէ Յակոբեան, դիւթեցին մեր սիրտերը, իրենց ձայնին թրթուռն ելեւէջներովը մեր հոգիները ալեկոծեցին:

Օր. Զ. Պալեան, Օր. Կիւրեան, Փանոսեան ու Պ. Փանոսեան յաջողակ կերպով արտասանեցին իրենց քերթուածները:

Օր. Պալեան ու Օր. Վ. Կիւրեան, իրենց Մշեցիի ակնախօսի տարազին տակ, բաւական յաջողութեամբ երգեցին Բամառ—Գաթիպաի Պզթի Տղան:

Հանդէսը վերջացաւ Տաշ ուրիկի խումբերգովը, որ ծախահարութիւններու անվերջ տարափի մը մէջտեղ արժանացաւ կրկին եւ կրկին գնահատման ու հանդիսականները մեկնեցան ճշմարտապէս գոհունակ տպաւորութեան մը ներքեւ:

Յայտագրին յայտարարութեան համեմատ, այս գրական ու երաժշտական երեկոյթը կազմակերպող տիկնանց նըպատակը եղած է նոր զարկ մը տալ երաժշտութեան եւ նախափորձ մը ընել այդ ազնիւ հոսանքը մտցնելու մեր մէջ: Հիմնական ըլլան թէ ոչ այն կարգ մը տարածաշրջանութիւնները, որոնք կը լուսնին ամեն տեղ այս երեկոյթին առթիւ, մենք այս ձեռնարկը կը դատենք ու կը գնահատենք լոկ արուեստական տեսակետով, ու կը սպասենք որ այս նախափորձը ընող տիկնանքը, հասարակութեան այս միահամուռ ընդունելութիւնէն քաջալերուած, ջանան աւելի հաճելի ու աւելի կատարեալ ընծայելու իրենց յաջորդական ձեռնարկները:

ԳՐՈԳԵ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Իրաւունքի պատուարժան գործակատարներէն և բաժանորդներէն կը խնդրուի առայժմ գրում և ապահովագրեալ նամակները զրկել թերթի պատասխանատունն սա հասցէով

г. М. СКОБОВЪ 32 в. «Иравункъ» Варна.

Կամ

M. Mhran Seonian  
pour la Rédaction du journal  
„Iravounk“. — Varna.

ԼՐԱՔԱՂ

Սիլիստրէի ազգ. ընթերցարանի վարչութիւնը կը խնդրէ մեզմէ իր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել ընթերցարանի ընկերութեան ընդհ. ժողովի նախագահ Տ. Համբարձում Մ. Յարութիւնեանի որ ընթերցարանի յառաջդիմութեան համար ջանք չխնայելէ զատ, անոր նուիրած է 4 ազգ. թերթ, 9 հատոր գիրք եւ 40 ֆռանք:

— Վեհ. Կաթողիկոսը մտադիր է Բագուէ Եանախ երթալ:

— Ն. Օձուրիւնը այցելելով Թիֆլիսի թանգարանը մէկուկէս ժամ դիտելու է հնութեան առարկաներ որոնց մասին բացատրութիւն կուտար Տ. Ա. Երիցեան: Թանգարանի վերատեսուչն իր պաշտօնատեղին ընդունած եւ հիւրասիրած է Կաթողիկոսը:

— Թիֆլիսի մէջ փետ. 1ին կատարուեցաւ հանգուցեալ Ս. Գ. Սիթարեանի թաղման հանդէսը, ուր Վեհ. Կաթողիկոսը խօսեցաւ դամբանական քարոզը: Հանգուցեալը Ներսէսեան վարժարանի կտակեր է մեծ մասն իր հարստութեան, որ կը կարծուի թէ 35000 ռ. ըլլայ: Կտակարարին կամաց համաձայն, չորս թոշակաւոր աշակերտ Ներսէսեան վարժարանի եւ երկու աշակերտ Մօսկուայի համալսարանին մէջ պիտի պահուին: Բարեկիցատակ Սիթարեան կտակած է նաեւ 1000 ռ. Հայոց Բարեգործ. ընկերութեան:

— Նոր—Դար կիսմայնէ թէ Թիֆլիսի մէջ հայ գրամատեններու խմբակ մը կազմուել է, որուն գլուխը կեցած է Նշանաւոր հարուստ Մանթաշեան եւ որուն նպատակն է հաստատել մանկ. փաթուղայի մեծ գործարան մը նոյն քաղաքին մէջ:

— Ռուս թերթ մը կը ծանուցանէ թէ Բէթլէմիսի իր հայ վաճառականներէ ոմանք Մատինեան ազգական կիսմա-գիտնի տեսութեան առաջարկեր են հայ աշակերտութեան համար կրօնագիտութեան հայ ուսուցիչ մը կարգել որուն ամաթոշակը պիտի վճարեն առաջարկութեան հեղինակները:

ՀԱՆԴԵՍ

Հինգշաբթի օրը Ս. Վարդանանց հանդէսը կատարուեցաւ քաղաքի եկեղեցիին չրջափակին մէջ, ուր ներկայ էր երկուստ ազգայիններու հոծ բազմութիւն մը: Հանդէսին կը նախագահէր Կաթ. այցելու հովիւ Արսէն վարդ. Վեհուհի, որ երկու օր առաջ Պուրկաղէն հասած էր Վառնա: Մանկապարտէզի երեք մանուկներ արտասանեցին սիրուն եւ հայրենասիրական ոտանաւորներ եւ զպիտերն երգեցին ազգ. երգեր: Բանախօսեցին Գեր. այցելու հովիւը, Տ. Յարութիւն Չաքըրեան եւ երկուս վարժարաններուն տնօրէն Տ. Միքայէլեան օրուան յարմար նիւթերու վրայ:

Հանդիսատես բազմութեան մէկ մասին մէջ կատարուեցաւ փոքր հանգանակութիւն մը եւ արգիւնքը գրուեցաւ Տ. Յարութիւն Չաքըրեանի տըրամպետութեան տակ, որ որոշեց այդ գումարին փոխարէն իր Տաւրոս թերթէն մէյմէկ օրինակ նուիրել Վառնայի, Եոթմայի եւ Պուրկաղի ազգ. վարժարաններուն:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հինգշաբթի գիշեր Անկի Սլաւօֆի սրահին մէջ թատերական ներկայացում մը տեղի ունեցաւ Վիսլի խումբին ձեռնով ի նպաստ Վառնայի ազգ. վարժարաններուն: Ներկայացած թատերախաղն էր Վարդան Մալիկեանի: Աննշան բացատրութեամբ զերասանները լաւ չ'կատարեցին իրենց դերերը: Հանդիսատես բազմութիւնը շատ ստուար էր, այնպէս որ ստոմակները ամբողջապէս սպառած էին: Զուտ հասոյթ կենթադրուի մօտ 300 ֆռանք:

Ենթակալութիւնն այն ազնիւ երիտասարդներուն, որոնց նախաձեռնութեան կը պարտինք այս ներկայացումը:

ԱԶԴ

Ազգ. երկսեռ վարժարանի դասախօսութիւնը, ըստ ժամանակացոյցի, կ'ըսկսին յառաջիկայ երկուշաբթի օրէն:

Պատ. ծնողք, պաշտպանք եւ կըրթասէր ազգայինք կը հրաւիրուին նոյն օրն, առաւօտեան ժամը 9էն մինչեւ երեկոյեան ժամը 4 1/2, ներկայ ըլլալ պատախօսութեանց՝ մօտէն ճանչնալու համար աշակերտաց եւ աշակերտուհեաց ուսման զանազան ճիւղերու մէջ ունեցած սկզբնական կարողութիւնները:

Տեղեկութիւն

Վառնա, 13 փետ. 1898

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Արթուր լրագրին Բարիդի թղթակցը տեսակցութիւն մ'ունեցեր է նոյն տեղի Պուրկաղ գիւղական գիտական գործակալար Տ. Կէջօֆի հետ Մակեդոնական խնդրին վրայ: Տ. Կէջօֆի տեսութիւնները կրնան ամփոփուիլ այսպէս.

Մակեդոնիոյ նկատմամբ Սերպիկալուկար համաձայնութիւն մը առանց Յուստանի կարելի չէ, նոյնպէս յոյն եւսերպ համաձայնութիւն մը առանց Պուրկաղիոյ. անկարելի է մասնաւոր Պուրկաղիոյ, Յուստանի եւ միասին գամայն Սերպիոյ միջեւ համաձայնութիւն մը, նկատի առնելով Սերպիոն անիրաւ եւ տարապայման յաւակնութիւնները Մակեդոնիոյ նկատմամբ: Անոնք ազգագրապէս եւ աշխարհագրապէս իրաւունքներ կրնան ունենալ Մակեդոնիոյ այն մասին վրայ որ մինչեւ Եարազղ կը յանգի. այս լեռան հիւսիսային կողմի ստորոտը բնակող ժողովուրդը Սերպ է, Գոսօօ, Բրիգլէնտ եւ Բրիսթինա քաղաքներով մէկտեղ: Անկէ անդին ըստ իրաւունք չունենալով եւ սակայն բոլոր Մակեդոնիոյ մասին յաւակնութիւններ տածելով անկարելի կը դարձնեն ո եւ է համաձայնութիւն իրենց եւ Պուրկաղիոյ միջեւ: Իսկ Յոյներն ու Պուրկաղիները կրնան իրարու խօսք հասկնալ, իրարու իրաւունք ճանչնալով փոխադարձապէս: Մակեդոնիոյ թեմալիոյ կողմի մասը առհասարակ յոյն է, իսկ Պուրկաղիոյ կողմի Պուրկաղ: Այս ըլլալով է համաձայնութեան հիմը: Իրաւ, տեղ տեղ ալ խառն է ազգաբնակչութիւնը, սակայն այս չկրնար համաձայնութեան անբաժնալի արգելք մ'ըլլալ. կը գտնուին միջոցներ այս դժուարութիւնը հարթելու: Մէլանիկի ինչպիսի ալ կըրնայ բարեկամաբար լուծուիլ, ինչպէս արդէն Յուստանի մէջ կան մտածողներ թէ Պուրկաղի պիտի յօժարի այդ նաւահանգիստը Յուստանի թողնելու, անոր փոխարէն ուրիշ նաւահանգիստ մ'ալ ինք գրաւելով:

Ռուսմանիա իսկապէս բնաւ իրաւունք չունի խառնուելու այս գործին մէջ, որովհետեւ ուրաւ ազգաբնակչութիւնը չափազանց աննշան թիւ մը կը կազմէ Մակեդոնիոյ մէջ: Եւ եթէ Ռուսմանիայի ձայն կը բարձրացնեն

Մակեդոնական խնդիրն մէջ, չէ թէ օր մը երկրին մէկ մասին տիրանալու փափագով է, ալ ուրիշներու տիրանալու միջոցին: Դառնութի կողմէն իրենց համար փոխարինութիւն մը պահանջելու դիտաւորութեամբ է որ ձեւական պոստախօսութիւններ կ'ընեն այժմէն: Պէտք է աշխատիլ որ վարչական ինքնօրինութիւն մը տրուի երկրին, որովհետեւ այդ միջոցով քրքրատնայ ժողովուրդներու վիճակը պիտի բարւոքի, շատ տեղերու բնակիչներուն ազգային ծագումը, որ հիմայ տարակուսելի մնացած է, պիտի որոշուի եւ յայտնի պիտի ըլլայ թէ անոնք իսկապէս Պուրկաղ են թէ Յոյն. վերջապէս ինքնօրինութիւնը ճանաչող պիտի բանայ Մակեդոնիոյ ապագայ բաժանումին վերը բացատրուած իմաստով:

ԵՐԿՈՒ ՀԵՏԱՔՐԻՐԱԿԱՆ ԴԱՏԵՐ

Սերպիոյ ներկայացուցիչն ի Սօֆիա գատ պիտի բանայ Օցիվ պուրկաղ թերթին դէմ, սր գրած էր թէ Սերպիոյ Աղէքսանդր թագաւորը այրել տուեր է Հիլէնտար (Ալթու լեռ) վանքին վերաբերեալ մէկ քանի հին վաւերութիւններ, որոնք կը հաստատեն թէ այդ վանքը պուրկաղ վանականներու սեփականութիւնն եղած է միշտ:

Օցիվ կը յայտարարէ թէ ուրախ է սր դատը իրեն առիթ պիտի տայ հրապարակաւ հաստատելու ինչ որ գրած է:

— Տ. Վիսարիօն վիսարիօնովիչ Քօմարօֆ, խմբագրապետ Սվիէք ռուս լրագրին, դատ բացած է ռուսօսլավօֆեան կուսակցութեան օրկան Նարոտնի Բարալա լրագրին դէմ, որ ըսած էր թէ Քօմարօֆ իր լիզուն փոխեց Պուրկաղիոյ և իր վիճապետին նկատմամբ Սօֆիայէն 60,000 ֆր. ընդունելէ ետքը:

Տօքթօն Ռատօսլավօֆ, համաճանաչուցութեան պետը եւ ուրիշ հինգ փաստաբաններ ինքնաբերաբար առաջարկեցին Օցիվի պատասխանատու խմբագրին որ զիրենք փոխանորդ կարգէ դատարանին առջեւ զինք պաշտպանելու համար:

Դատավարութիւնը որուն պիտի մասնակցին Սօֆիայի լաւագոյն փաստաբանները, կը խոստանայ շատ շահեկան ըլլալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այն շահագրգռութիւնը զոր Ամերիկայի միացեալ Նահանգները ցոյց տուին Քուպայի ապստամբութեան նկատմամբ, իրենց 2 1/2 միլիոն սօլառի (12 1/2 միլ. ֆռ.) քննու մը տուաւ: Ամերիկեան մեծ զրահաւոր մը, Մէյն տիւն, սր կը պատրաստուէր Քուպա երթալ, հովանոյի առջեւ ընկղմեցաւ ռուսմանիւթերու պայթուի մը հետեւանով: Պահ մը կարծուեցաւ թշնամական խողմէնէր այս Սպանիացիներու իտլմէն սարքուած, բայց յետոյ ստուգուեցաւ որ պայթուի լոկ դիպուածական էր:

— Բարիդի նորընտիր ռուսական դեսպան իշխան Ուրուսօֆ Հանրապետութեան նախագահին մատոյց՝ սովորական հանդիսաւորութեամբ, իր պաշտօնը հաստատող վաւերաթղթերը: Այս առիթի նախագահին և դեսպանին միջեւ փոխանակուած բանախօսութիւնները անգամ մըն ալ չեղ-

տեցին ռուսահեփոսական բարեկամութիւնն և դաշնակցութիւնը: — Բարիդի մէջ տեղի ունեցաւ հակահրէական միթինկ մը, որ որոշեց իր խորին համակրութեան առհասարակ հաղորդել Ալէքսիայի հակահրէական կուսակցութեան:

— Ալէքսիայի խոսքով ինքները տաք վիճարանութեան նիւթ եղան նաեւ Բարիդի երեսփոխանական ժողովին մէջ: Խոսքովեան հանդէպ ձեռք առնուած միջոցներուն թեր ու դէմ խօսուեցաւ. վիճարանութիւնը փակուեցաւ ընդունելութեամբ օրակարգի մը, որ հաւանութիւն կուտար կառավարական յայտարարութեանց:

— Այն լուրը թէ Անգլիա գաղտնապէս Չինի հետ կնքած է փոխառութեան պայմանագիրը, դեռ չի հաստատուեցաւ:

— Գեղեցիկ սուր անվստոտու կունութեամբ և աշխատասիրութեամբ կը յաջողի ամէն երկիրներու մէջ ալ սպրդիլ այն ասպարէզները, որոնք ցարդ արական սեռին բացարձակ մենաշնորհը կը նկատուէին: Այսօրինակ նորագոյն յաջողութեան մը լուրը Գերմանիայէն կուգայ: Կոմսուհի տօքթօն Մառի Ֆոն Լինտէն թիւ պիտի կենի համալսարանին կենդանարանական հիմնարկութեան երկրորդ օգնական տնտեսուիչ է:

ԳԼՍԱՍԱ ԳՍՐԵԼ ԳԼՍԱՍ

Իքի հաֆթա մուգատուէմ Քօր. սիգանըն Պասդիա շէհրինտէ եիր. մի տօգուղ եաշընտա վէ Ֆաժմի. նի իսմինտէ պիր տէլիգանը իտամ իտիլտի:

Պու տէլիգանը, կէչէն յուլիսին եիրմի իքիսինտէ Պօրկօ ըսթա սիօնընըն պաշ մէմուրըն օթուղ եէրինտէն եարալալը պէօլտիլմիւշ վէ կէչէն դեկտեմբերտէ ճինայթ ժաշքէմէսի հուզուրընտա իտամ՝ ճէգաւընա մաշքիւմ օլմուշ ըտը. քէնտիսինէ գարը բէք չօգ իսպաթլար, բէք չօգ էմարէլէր մէվճուտ օլտըղը հալտէ, ճիւրմինի սօնընա գատար ինքեար իթմիշ վէ եալընըլ իտամ իտիլէճէյի կիւն պապահաթընը իգարը իլլէմիշ իտի. տէմիշ իտի քի. «Ճինայթին վուգու պուլտըղ կէճէ Պասդիատան Պօրկօյա վաւըլ օլտում վէ օ կէճէյի սթա սիօն մէմուրընըն օլտաւընտա կէչիլտիմ. կէճէյին մէրգուլմըն ուլլումագտա օլտըղընա գանաթ հասըլ իտինճէ, եէրիմտէն ուսուլճա գալըղտմ վէ պուչաղա վիւճուտին տէլէք տէլիք իթիք. տէն սօնրա էօլտիլտիլմ»:

Գաթիլ իտամ իտիլէճէք մէյտանա նազլ իտիլտիլի զէման, եէնտէն ճիւրմինի իթիլտիլ իթմիշ վէ ճէնապը Հագտան աֆվտիլմիշ իտի. պատէհու քէլլէսի կիլիօթին ալթիլ ալթընա գօնուլարագ, տէօրթ տազըղա գարֆընտա գաֆասը կէօվտէսինտէն ալըլմըշ ըտը:

Պու վագաա հէր կիւն հէր սաւաթ կէօրտիլիւմիւշ վէ իշիթտի.

յիմիզ շէյնէրտէն օլտըզը իշին, գալպիմիզտէ հիշ պիր հէյնէճան հասըլ իթմէզ, տէլիլ մի. հալպուքի պու վագաալը հիքեայէ իտէն կազէթա՝ պիր թագըմ ատիլանէ վէ հաքիմանէ միւթալաւարտա պուլունըյօր քի, պսնլարը խիւլասաթէն օգուլանլարըմըզա պիլտիրմէյի միւնասիպ ատտ իտէրիզ .

« . . . Էկէր Ֆաթմինի սթա. սիօն մէմուրընը էօլտիւրտիլին. տէն տօլալը մէսուլընա, օնուն քէլլէսինի կէօվտէսինտէն ալըրմագ վահէթինտէ պուլընանլա՝ Նի. չին մէսուլ թուլթուլմալը . Պու Նէ՝ հագգ, պու Նէ՝ ատալէթ .

«Պիր գապահաթըն, պիր ճիւն. հանըն, պիր խիւնայէթին ֆաիլի. Նէ ճէզա թալին իթմէքտէն մագ. սատ Նէ՝ տիր. վազիի գանուն պունտան Նէ՝ ֆաիտէ կէօզէթմիշ տիր. գանուն քիթապլարընտա օգունտըզընա կէօրէ, պունտա իքի ֆաիտէ վար տըր քի պիրի միւնըրիմի թէրպիյէ իթմէք վէ տիկէրի տէ պաշգալարընա իպրէթ օլմագ տըր . հանի պիր քիմ. սէ պիր գապահաթտա պուլընա. ճագ օլուրսա, գապահաթընըն տէրէճէսինէ կէօրէ թէրթիպ օլը. նան ճէզա հէմ օ քիմսէյի թէր. պիյէ իտէր վէ հէմտէ պաշգալա. ընա իպրէթ օլմուշ օլուր :

«Գանուննամէլէրտէ պէօյէ հա. զըլը օլտըզը հալտէ, պիր գաթի. լի թէրպիյէ իթմէք իշին կիլ. հօթին գուլլանմագ Նէ՝ տէմէք . Ճէզատան մագսատը ասի օլան ֆաիտէլէր պու հօլ ըլա նա՝սըլ հուսուլա կէլէպիլիւր : Պունա վահ. շիլիքտէն պաշգա Նէ՝ իսիմ վէրի. լէպիլիւր :

«Գըսասա գարշը գըսաս հալը. նըզ իսլամ շէրիաթընտա մէվճուտ տըր : իսլամ շէրիաթը՝ պիր ա. վուճ բագլա չալանըն պիլէ պիլէ. յինի գօրարմալը էմր իտէր . հալ պու քի պու կիպի ահքեամը զա. լըմանէ օմանլը մէմալիքիտէն պիլէ գալտըրըլը իքէն, խրիս. թիյանլըզ կիպի ատալէթ, հագ. գանիլէթ վէ ինսանիլէթ իւզէ. ըինէ միւնսսէս օլան պիր տիին հիւքմ իթտիյի մէմլէքէթլէրտէ վէլէվ գաթիլ օլուն պիր քիմսէ. նին հայաթընը զասպ իթմէք հանկը ատալէթ վէ հագգանի. յէթէ մուվաֆըզ տըր :

«Ճանի՝ օ ֆիլի վահշիյանէյի իճրա իթտիյի զէման, հիտտէթ վէ հա ճիւնէթ հալինտէ օլա՝մագ մը . հաթթա էրպապը ֆէնտէն պիր չօղը՝ պիր ճանիլին պիր տէլի, պիր մէճնուն օլտըզընը վէ ճիւն. յէթինի իճրա իթտիյի զէման ազլը պաշընտա օլմատըզընը պիր չօգ թէճըրիպէլէրլէ մէյտանա գօյ. մամըլար մը տըր :

«Սէօզիւմիւլիւ խիւլասա իտէ. ըէք տէրիզ քի, պիր գաթիլին գաթիլ տէյիլ, թէէտիպ վէ թէր.

պիյէսի լազըմ տըր . պու սուրէթ. լէ հէմ քէնտիսի միւսթէֆիտ օլուր հէմ պաշգալարը տա պունտան իպրէթ ալըրար . պիր գաթիլի գաթիլ իլէ ճէզալանլարմագ՝ հէմ գանունա գարշը, հէմտէ ատալէ. թի իլահիյէյէ մուզայիլը օլտըզը իշին հիշ պիր վէճէլէ աֆի օ. լունմագ պիր ճիւնայէթ սալըլըր :

### ՏԱԽԻԼԻՅԷ

Նաֆիա Նէզարէթի վէտինտէ հարըլմասը մուգարէր օլան ըլիս. թըմ բլանընը իքմալ իթմէք իւ. զէրէ տիր : Պու ըլիսթըմ՝ թու. նա չալընըն ճօյմասընա գարշը մէզքիւր շէհրի միւտաֆաա իթ. մէք իշին հարըլաճագ տըր : Եագընտա միւնագասալա գօնու. լաճագ օլան մէսարիֆին մըգտա. ըր 550,000 ֆուանը թախմին իտիլմէքտէ տիր : Սիսթօվտա հա. բըլաճագ ըլիսթըմըն բլանը տա. խի խիթամ պուլմագ իւզէրէ տիր :

Սօֆիա պէլէտիյէսի թարա. ֆընտան վէլօսիլէտ գուլլանլար իշին սէնէվի 15 ֆուանլըզ պիր թագսա գօնուլմըլ տըր :

Աւսթրիանըն թու. վարօր գուլմանհասը իշին Պուլկարիա վէ Աւսթրիա տրասընտա ազտ օ. լունան մուգալէլէ էօնիմիւլտէքի ապրիլ 1տէն իթիպարէն մէվզըի իճրայա գօնուլաճագ տըր : Պու մուգալէլէլէմաճէ ահքիւմընճա, հօլ. ճըլարտան վէ հիւքէրտէն ալընան թագսալար թէնլիլ իտիլէճէք վէ գուլմաննանըն իշէտիլի լիման. լարըն՝ վառնա--րուսնուգ չըմէն. տըլէր խաթթըլա՝ տօղրուտան տօղրուլա իլիսթիլաթը օ թարիլ. տէն պաշալաճագ տըր :

Մալիյէ Նաղըրը Մ. Թէօտօ. րօֆ վիէննա վէ Բարիզ պանգա. լարըլա պիր իսթիգրալ ագուր իշին մէզքիւր շէհրիլէրէ կիթմիշ օլտըզընտան, փաթ. 7տէ թէք. րար Սօֆիայա ալտէթ իթմիշ տիր :

Բրէնսէս Գլէմանթինին հալի կիթտիքճէ էյիլէլմէյէ վէ ագ ճի. յէրէլինին իւֆուէթի հալալ. հալալ ազալմայա պաշալտըզը վի. էննտան փետր. 6 թարիլիլէ կէլէն պիր թէլէկրաֆտան անլալը. մըլ տըր :

Սօն պիր թէլէկրաֆա Նէզա. ըն, պիր գաշ կիւնտէն պէրի ըր. ընսէս հագրէթլէրինին հալինտէ հիշ պիր թէպէտտիւլ կէօրիւմէ. միշ տիր :

Թիճարէթ վէ զրտաթ Նէզարէ. թի թարաֆընտան Ամէրիգայա 500,000 տամ ֆիտանը սըլարըլ

իտիլմիշ տիր : Մալիւմ օլտըզը իւզրէ, ֆիլօգսէրա տէնիլէն գուրթ. լար պաղլարըն գըսմը ազամընը խարապ վէ պէրպատ իթմիշ օլ. տըզլարընտան, պու ֆիտանլար իլը պէհարտա եէնիտէն պաղլարա տիքիլէճէք վէ իւզիւմ մահսուլը. նա եէնիտէն գուլվէթ վէրիլէճէք տիր :

Ախիւրէն Սօֆիայա զիյարէթ իթմիշ օլան Մ. Գիւլէրվիլ Նամ ֆրանսըզ սէյեհհընըն արլու վէ թալէպի իւլէրինէ, Պուլկար հիւ. քիւմէթի Բարիզ Միւզէսինէ վաղ օլունմագ իւզրէ մէրգուլա 13 ա. տէտ միլլի էրքէք վէ գատըն էլ. պիսէսի կէօնտէրմիշ տիր :

### ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Հօնորա կազէթալարընտան պի. ընին ինկիլիզ մուսպիլի Սկիւպ ուլկունսըզլըզլարըն էսնասընտա թէվզըթ վէ հագս իտիլմիշ օլտը. զընտան, մէրգուլմըն սալըվէրիլ. մէսի իշին ինկիլթէրանըն Սթան պօլ սէֆարէթ հանէսի իքինճի սըրր քեաթիպի Մ. Էլիօթ Սկիւպէ կիթ. միշ տիր :

Սուլթան, պու մէսէլէտէն տօ. լալը ինկիլթէրատա գապարմըլ օ. լան էֆրեարը ումուսիլէնին թէս. քինի իշին, Կօսովա վիլայէթի գալմագամլարընտան պազըրընը ազլ իթմիշ տիր :

Սրպիսթան մէթրօքօլիտի Մի. քայէլ Արքեպիսկոպօսըն ճէնազէ ալալը Պէլկրատտա կայէթ մու. թանթան սուրէթտէ իճրա օլուն. մըլ վէ պունտա գրալ Ալէքսանտր վէ գրալ Միւն հագրէթլէրիլէ սարալ վէ հիւքիւմէթ մէմուրարը վէ էճնէպի տէվլէթլէրինին Էլիէրի վէ պիր չօգ միւթէպէր զաթլար հալըր պուլընմըլար տըր :

Ալմանիանըն Սթանպօլ սէֆիլի Մ. Մարշալ Ֆօն Պիպերշթայն ախիլէն Սուլթանըն հուգուրընա գապուլ օլունարագ, քէնտիսինէ պիր գըթա մուրասսա Օսմանիլէ Նիշանը իհտա օլունմըլ տըր :

Ախիւրէն մալիլէ Նէզարէթինին միւսթէշարլըզընա Նասպ օլունտա ալմանիալը Բուսթաուֆ մէմու. ըիլէթինին պաշընա կէլմէսի միւ. նասէպէթիլլէ, էօհտէսինէ ըիւթ. պէի պալէա թէվլէհ օլունմըլ տըր :

Պալրամ միւնասէպէթիլլէ Սուլ. թան Համիտիլէ ճամիսինտէ Սէ. լամըզ ալալընտա հազըր պուլըն. տըգտան սօնրա, Տօլմա Պազշէ սարալընա ալիլմէթլէ, պիւթիւն վիւքէլա վէ վիւզէրանըն, մէմու. ըրինի հիւքիւմէթին վէ սէֆա. ըլթիսանէ պաշ թէրճէմանլարընըն

թէպրիքիաթընը գապուլ էյլէ. միշ տիր :

Սուլթան Սըրպիսթանըն սա. պըզ գըլալը Միւն հագրէթլէ. ըինէ պիւթիւն սըրպ օրտուսընըն ումուսի գօմանտանը սըֆաթըլա իմթիյալ Նըշանընըն ալթուլ մի. տալեասընը իհտա էյլէմիշ տիր :

ՄՈՒՀԻՄ ԻԽԹԱՐ  
Պունտան պէօյլէ թարաֆըմըզա կէօնտէրիլէճէք ապօնէ պիտէլլէրի. նի վէ քեալնիլալիլ մէքքուպ. լարը մուվագգաթ պիր միւտտէթ իշին աթիալէքի ատրէսլէ կէօն. տէրմէլէրինի կազէթամըլ ապօնէ. լէրինտէն վէ մապահաթիւզարա. ընտան խասսէթէն ըէճա իտէ. ըիլ :

Г. М. СКОНОВЪ за в. «Иравункъ» Варна.  
Եախօտ  
M. Mihran Sconian  
pour la Rédaction du journal  
„Iraounk“. — Varna.

Սաիր ատի մէթիւպ, կազէթա վէ սաիրէ եինէ էվլէլէքի կիպի տօղրուտան տօղրուլա կազէթամը. զըն պաշընտա կէօսթէրիլէն մաթ. պաս ատրէսինէ կէօնտէրմէլի տիր :

Ի ՌԱՐ  
Չիլինկիլ էսնաֆընտան վէ էն ասըլ Ահիւլ--Պուրկալըմիլլէթ. տալարըմըզտան Տ. Սարգիս Մ. ֆապալան. Օլթէնիցատա (Բու. մանիա) իգամէթ իթմէքտէ օլտը. զընը պիւթիւն Պուլկարիա տախիլինտէ պուլընան ագրապա վէ տօսթլարընա իլիսթար իտէր :

ՏԵՍԱԿԱՆ ԵԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Պոշկարեքն ընդոշի

Պուլկարիլէն սորվիլ փափագող. ները՝ առաջնորդ ունենալով իրենց սոյն քերականութիւն՝ կրնան վեց ամսուան մէջ կարգալ գրել և խօ. սիլ : Կը ծախուի ֆ. Պօլիս, թըլ. թալաճառ թագուր Գ. Հինտլանի մօտ :

Գինն է՝ ընտիր կազմ, հրահանգ. ներու բանալին մէկտեղ, 6 լէվ. թղթակազմ, առանց բանալիի 4 լէվ. առանձին բանալին 60 սանթիմ :

Մեծաքանակ գնողներուն մաս. նաւոր զեղչ կըլայ :

Կը ծախուի Կապու ի վառնա գրապաճառ Տ. Չարպահանէլեանի մօտ :

### ՏԱՐԵՑՈՅՑ

Հրատարակուցաւ հայ--Թուսնե. ընէ տարեցոյցն ի Կալաց, ձեռամբ Տ. Ղեւոնդ քահանայ ֆապալանի : Կը պարունակէ Ա. ժամանակագրութիւն երեւելի անցից ալիարհի . Բ. համա. ոտ գիտելիք ի վերայ տոմարին հայոց Գ. ոտանաւոր մը՝ Զգալուն հոգին . Դ. բուն օրացոյցը . Ե. յաւելուած մը որ կը բաղկանայ «ոգին արաբիլի» վերնագրով եղբերդութենէ մը, եր. կու ոտանաւորներէ ու բարոյալից ա. սացուածներէ :

Գին 1 ֆրանկ, կը ծախուի Վառնա գրալաճառ Ա. Չարքահանէլեանի քով : Տ. Ղեւոնդ քահանայ հրատարակած է նաեւ իր նախորդ տարուան օրա. ցոյցին յաւելուած որ կը ծախուի 50 սանթիմի :